



# ՅԵՐԲ ԽՐԽՆՁՈՒՄ ԵՆ ՁԻԵՐԸ

891.99

Լ-96

БИБЛИОТЕКА  
ИНСТИТУТА  
ВОСТОЧНЫХ ДЕЛ  
АКАДЕМИИ НАУК  
СССР

ՀՐԱՏԱՐԱԿԶՈՒԹՅՈՒՆ «ՅՈՒՍԻՍԱՅԻՆ ԿՈՎԿԱՍ»

ՌՈՍՑՈՎ-ԴՈՆ

1932 թ.

CA  $\frac{33-11}{317}$  Դ ՄԵԼԵՏ

ԱՇՈՏ ԼՈՒՍԵՆՑ

89/199

Կ-96

6 NOV 2011

ՅԵՐԲ ԽՐԽՆՁՈՒՄ ԵՆ  
Ձ Ի Ե Ր Ը



03 MAY 2013

33502



60200-67



Книгоиздательство  
„Северный Кавказ“

I.

Մկոն

Փորձված ձիապան եր,  
Կոլխոզի ձիերի պաշտպանն եր,  
Այնպես եր սիրում ձիերին,  
Ինչպես իր մոտիկ ընկերներին:

Սիրում եր անդադար  
Ձիերին թիմարել հոգատար,  
Բաշերը սանրել ու հյուսել,  
Հեաները խաղալ ու խոսել:



Մեզ պես հասարակ մարդ եր,  
Բայց գիտեր ձիերի լեզուն,  
Հենց այդ եր պատճառը, այդ եր,  
Վոր ձիերը դնչերը քսում,  
Նրան պաշել էյին ուզում:

Իսկ յերբ տեսնում եր մեկին,  
Վոր զոռ է տալիս մտրակին,  
Սիրաբ

ընկնում եր արագ

Մի ծով կրակ—

Ուզում եր՝

իրեն խփեն

Ձիու փոխարեն:—

— Այ մարդ,

չէս ամաշում,

Ի՞նչ ես գոռում, գոշում:

Այդպես ել

ձի կքշէն,

Վա՛յ տնաշեն:

Ու՞ժդ ես փորձում,

Թե ձիուն

անտեր ես կարծում:

Դու յեւ ես կոյխոզի անգամ:

Եստ ծեծե՛ս—

դատի կտամ...

Նրա ձեռքին

Գամը միշտ չոր եր, կարգին:

Փամանակին

Տալիս եր և ջուրը, և կերը:

Նրա որով՝

Ուրի՛շ եր ձիերի պատկերը:

Աշխատում էյին սիրով

Յե՛վ վո՛չ թե մտրակի զոռով:

Գլուխները թեքած ու հալարտ

Վագում էյին զվարթ,

Թռչում էյին թեթե ու արագ,

Ինչպես քուռակ:

Աչքերը ցայտում էյին հուր,

Ծփում էյին բաշերը փրփուր,

Իրենք չաղ էյին, գեմացկուն,

Պոչերը՝ կենդանի, խաղացկուն...

Խփելով նրանց բաշին,

Խոսում եր Մկոն ինքնիրեն.

— Հո ձի չէն,

մաշին են, մաշին,

Սա՛ր ել բեռնես՝  
կքաշեն...

## II.

Յեւկ ահա գյուղում  
մի որ  
Շոնդաց չորս տրակտոր:

Նրանցից խրանեցին  
Վոչ թե  
յեզն ու ձին,  
Այլ Տեր-Սահակը,  
Կուլակ Արշակը,  
Սպեկուլյանտն ու հարուստը.



Բայց յեւակ  
կոխողնիկ Վաղարշակը  
Վողջունեց նրանց գալուստը:  
Բարձրացավ մեկի վրա,  
Բազուկները քշեց առնացի  
Յեւկ, գեղը բռնելով,  
ուրախ  
Դեպի դաշտը քշեց զիմացի...

Իսկ Արշակը  
գիշերն ել դործում եր,  
Ամեն ինչ  
կշռում, մտածում եր.  
— Կոխողն որեցոր աճում ե,  
Թեեր ե առել ու թռչում ե,  
Տբակտորն ել  
հո՛ր նվաճում ե:  
Թողնել, վոր ելի՞ առնի թափ:  
Վոչ,  
պետք ե շտապ  
Կոխողին անել թեաթափ...

Հովազի պես փրփրում եր կուլակը,  
Կայքարի նոր ձևեր եր փնտրում...  
Յեւկ «անմեղի» պես խոտքի կրակը

Ու բամբասանքի սուր սլաքը  
Կոլխոզային ձիուն եր ուղղում։  
— Տրակտորը, ձիշտ ե, հզոր ե,  
Իսկ ձին՝

Ել անպետք ե, անզոր ե  
Տրակտորներն աշխատեն՝ հերիք ե,  
Ձիերին կերակրելը՝ չարիք ե,  
Յեվ լավ կլինի ավելի,  
Յեթե բոլորն ել ոտակեն,  
Այն ժամանակ ելի  
Տրակտորներ կուղարկեն։

Աշխատանքն այն ժամանակ  
Կգառնա՝ ուղղակի հանաք,  
Հեշտ ու եժան,  
Յեվ վոչ թե հիմիկվա նման  
Յեվ թմանգ, և դաժան...

Այսպիսի խոսքերի շառաչում  
Զիմաշան,  
Թե ում ձայնն ե հնչում։

Կուլակն աննկատ, ինչպես ցեց,  
Վարչության մաքի թեղն ել կորեց։  
Գարնանը  
Վորոշում հանվեց.

— Գարունն ու տրակտորը յեկան—  
Հարկավոր չե մշտական ձիապան,  
Թող ձիերը դաշտում արածեն  
Յեվ իզուր աշխուրեք չկորչեն,  
Մկոյին ել հանել,  
Ուրիշ տեղ ուղարկել...

### III.

Կոլխոզի ամեն մի քնջում  
Դիմազրկությունն եր շրջում.  
Ամեն ինչում  
Նա յեր շնչում,  
Նա յեր աղաղակում ու կանչում։

Հինգ որ առաջ  
ձիապան եր Սերգոն,  
Հետո՝

դարձավ Հագոն,  
Յերեկ,  
պատահմամբ,  
Պետրոսը,

Այսոր,  
հանկարծ,  
Մարտիրոսը,

Զի,  
Դիմացի,  
Թե հերոս ես:

Ել գոմբ ան չեր,  
Առաջվա նման չեր—  
Դարձել եր թրիքի մի դեզ,  
Անմաքրության ասպարեզ:

Ել ով եր ձիերին թիմարում  
Լողացնում ու սանրում:  
Մեջքերի կեղտն եր քերում  
Վոչ թե

խողանակր,  
Այլ կոպիտ մարակր  
Յեվ հաստ դադանակր:

Ով պատահում եր՝

Հեծնում եր:

Հեծնելու մեջ

քանց եյին անսահման—

Քշում եյին աննման:

Շատ եյին ճարպիկ ու արթուն—

Մեկին՝ յերեքն եր նստում:

Հեծնողներ՝ ինչքան ուղեյիք—

Սունկեր եյին կարծեք,  
Բանում եյին ամենուրեք

Անթիվ, անանուն,

Իսկ ձիուն խնամող

յերբեք

Վոչ վոք չեր լինում:



Զին

Մի որ

Աշխատում եր գիշեր ու գոր,

Մյուս որ՝

Ընկած սար ու ձոր—

Թափառում եր քաղցած, անզոր:

Նա իզմէր եր գարի յերազում,  
Ո՛ր, այդ նրան չեր սագում.  
Տեսնում եր միայն յերազում:

Զիւրն առույգ ու մստա  
Դարձան հիվանդոտ,  
Վերքոտ ու քոսոտ.  
Զորացան,  
Կմախքի պէս դարձան:

Թափվեցին վռակեփայլ մագերը,  
Հանգան քուրաներն աչքերի.  
Յեզնիկի պէս սիրուն ձիերը  
Դարձան տգեղ, անճոռնի...

Սպիտակն ու Զեյրանը դարձին  
Ծանր բեռից վիժեցին:  
Սևուկն ու չալ ձին  
Քաղցից սատկեցին:  
Կենդանի քուռակ ել չեր մնում՝  
Սատկում եր կամ գայլն եր տանում...

Որեցոր այսպէս վառնում եր...  
Յեվ այն եր լինում հետեփանքը,  
Վոր անվերջ թերակատարվում եր

Յեվ հունձը,  
և վարը,  
և ցանքը...

Տեսնում եր Մկոն այս բոլորը  
Յեվ ցավում եր սրտից այնպէս խորը.  
Պոսում եր ջղային, անհանգիստ,  
Վիճում, բողբոջում եր խիստ.  
— Ընկերներ,

ախր ինչ ենք անում,  
Այսպէս են ձիերին պահում,  
Հո, մեր թշնամիները չեն,  
Վոր կռաորում ենք՝ կորչեն:

Տրակաւորները մենակ, առանց ձի,  
Տեսնում եք, չեն հասնում գործին.  
Տրակաւոր և ձին  
Իբար թշնամի չեն դառնում,  
Այլ ընկերներ հաւասար,  
Վոչ թե խանգարում,  
Այլ ոգնում են իրար:

Զիւրին,  
ընկերներ,  
Զպետք և անխնամ թողնել...

#### IV

Բայց յերկար չտեղեց այդ բոլորը:  
Փոխվեց շուտով վարչությունը  
Յե՛վ յելավ ժրաշան հոմսումուր:  
— Ցավ ե գիմագրկությունը,  
Ասաց կոմյերիտ Հարությունը:  
— Ցավ ե,  
    և ինչպես համաճարակ  
Զիերին կոտորում ե արագ:  
Պեաք ե կցել ձիերին  
Մշտական ձիապաններին:  
Կոմսումուրն ել,—  
    ասաց Հարությունը,—  
Վերցնում ե ձիերի շեփությունը...

Նորից Մկոյին  
Կցեցին ձիերին:  
ԲՆԻՆԻց ել նրան,  
Վորպես ոգնական,  
Անուշն ու Սուրենը յեկան:

Բրիգադիր կոմյերիտ Մուքին  
Բրիգադով կալավ խոտհարքին:

— Դեհ, թշնամի,  
    խոտի պես պառկի,  
Մեր ձին պետք ե կանգնի վոաքի:  
Բրիգադը հարում եր, դիզում,  
Մրցում եր ծավալում կոլխոզում:

Բայց մի գիշեր ամպամած,  
Յերբ լուսինը կորել եր,  
    հանկարծ՝

Վամն քսեց լուցկին  
Յե՛վ մի գեղ գիշերվա կեսին  
Վառվեց ու յելավ վերև,  
Ինչպես արև:



Մեկայն տղաներն ասին.

— Եստ չմտածել այդ մասին,  
Պետք է անցնել սիլոսին:

Վառվեց յեռանդի կրակը,  
Բարձրացավ սիլոսի աշտարակը,  
Հոնդաց քամու նման  
Սիլոս ջարդող մեքենան:

Աշխատում էր այնպեղ Հարությունը  
Յեվ յերգում էր իր խնդուխտներ.

— Զարթնիր, ուղորտունիստ,  
Քնիցդ հանդիստ,  
Տես, գարժ ենք անում, թե հանաք,  
Այ տատանվող ճոճանակ...

Սուրենը Մկոն ու Անուշն էլ  
Տարվել էյին ձիերով,  
Զեյին նայում, թե ուշ է,  
Տուն էյին գնում գիշերով:  
Ժողովումն էլ, գրքերով զինված,  
Յեղնում էյին միասին,  
Քոստում էյին վառված  
Զիաբուծության մասին:  
Յեվ ասում էյին նրանք.

— Զմուռնանք,  
Վոր ունենք Կարմիր բանակ,  
Յեթե մեր ձիերն այսօր  
Առողջ են, ուժեղ ու հզոր,  
Ուրեմն հզոր է  
Հեծելագորրը:  
Հարգենք ձիերին,  
Ինչպես Բուդյոննին...

— Սուրեն,  
Կռենես շուտով,—  
Ասում էր Մկոն հավատով,  
Մեր ձին՝  
Պետք է նմանվի առյուծին...

## V

Դեռ հիմա յեղ Մկոն ձիապան է,  
Յեվ յեթե պատահում է հին բանը,  
Յերբ ձիու հետ վատ են վարվում,  
Նա կրակ է դառնում ու վառվում:  
— Հո կուլակն էլ չի ազդել,  
Վոր ուզում էս ձիուն ջարդել,  
Զդային ես՝

գնա բժշկի.

БИБЛИОТЕКА  
ИНСТИТУТА  
ВОСТОЧНОВЕДЕНИЯ  
Академии Наук  
СССР



Իսկ ձին՝

չպետք է զնաօվի:

Լավ ձին՝

մեզ պատիվ ու պարծանք է,  
Նրան ծեծելը՝

հանցանք է...

Արանից հետո,

յեղբայր, արի,

Ձիու հետ վարվենք մարդավարի...

Ձիերն ել,

յերբ խոսում ե Մկոն,

Շարժում են հպարտ՝ գլուխները,

Խրխնջում են ուրախ ու գոհ—

Կարծես հասկանում են խոսքերը...

## VI

Տրակառն ու ձին

Հիմա միասին

Սլացող բազեյի նման


Թռչում են դաշտերով պայծառ,

Ռշտաառում ե ոգնում են իրար,

Վորպես ընկերներ անբաժան:

Կոխոգնիկը

Դուրս ե բերում



Նրանց՝

Ինչպես մի բանակ

Յեվ աշխատանքի դիրքերում

Տանում ե անվերջ հազթամակ:

Յեվ այնտեղ՝

բարեկազմերում

Վոնց հազթամակի դրոշ

Նվաճող սոցիալիզմն ե յեղնում

Հաստատուն, համառ ու վերսի:

Տեղահան ե լինում հիմքից

Դուրս ե քաշվում հողից

Չարեքի իսկական արմատը:

Ու վերանում են հիմնովին

Խնամքները վերջին՝  
Կուլաիր, Հարչին, սպեկուլյանտը:

Մի աշխարհ ե շինվում, մի մեծ շենք.  
Մի գարուն ե ծաղկում՝ գեղեցիկ,  
Վարտեղ

Վոչ Թե  
միայն մենք՝

Բանվորը,  
կոլտոզնիկ-գյուղացին,  
Այլ մինչև անգամ  
և մեր ձին  
Զգում ե իրեն յերջանիկ:



От. ред. В. К. Цовьян Технический редактор М. Г. Маргарьян  
Сдано в набор 20/XI-92 г. Сдано в печать 7/XII-92 г.  
Статформат А6 106x148 мм Об'єм 1/8 печ. л.  
Издание № 2686. Заказ № 5974. Уполкрайлит № 01927. Тираж 2000

ՀՀ Ազգային գրադարան



NL0333624

33502

ՀԻՆԸ 50 ՀՈՊ.  
Цена 50 коп.



На армянском языке

Ашот Лусенц

ПОЭМА О КОНЕ

ИЗД-ВО „СЕВЕРНЫЙ КАВКАЗ“

ԴՐԱԴԱՀԻՍՏԵՐ

ԴՐԱՍՏՈՎ-ԴՈՆ, ՄՈՍԿՈՎՍԿԱՅԱ ՓՈՂ, 53

ԳՐԱԿԵՆՏՐՈՆ (ԿՆԻԳՈՑԵՆՏՐ)